

ՍՈՒՄԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՏԱՌԻ
ժողովուրդի անշոյալը

ՊԱՏՄԱԿԱԾՔՆԵՐ



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.19-32 Հարությունյան

ԳԱԴ 84(5Ը)-44

Հ 422

Հարությունյան Սուսաննա

Հ 422 Անտառի մեղավոր անցյալը: Պատմվածքներ / Ս. Հարությունյան - եր.:
Newmag, 2024. - 144 էջ:

Այստոր ժողովածուի հերոսները հոգով, կենցաղով, քնալիրությամբ անցյալում մնացած մեր ժամանակակիցներն են: «Անտառի մեղավոր անցյալը» պարզ, բայց հյութեղ ոճով, հեղինակին քնորոշ ու գրաքննությունն արհամարհող հումորով, երբեմն նաև դրամատիզմով հագեցած 19 պատմությունների փունջ է: Ընթերցողը մտնում է արժեհամակարգային տատանումները մերժող մարդկանց աշխարհ, որտեղ կյանքը համահունչ է բնության դիմախհին, հեղինակն էլ իր «կարմիր զծերը» սահմանում է անվերջ տեղաշարժվող, նույնիսկ երբեմն անհետացող բարդական նշանողների համակարգում:

ՀՏԴ 821.19-32 Հարությունյան

ԳԱԴ 84(5Ը)-44

Գլխավոր գործընկեր՝
ՎԵՐԱՆՆՈՒՆԴ ԿՄՆԱԴՐԱՄ
rf.am



ՎԵՐԱՆՆՈՒՆԴ
ԳՐԱՏՆՈՒԹՅՈՒՆ

ISBN 978-9939-967-30-1

Անտառի մեղավոր անցյալը © 2024 Սուսաննա Հարությունյան, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:
Գիրքը հրատարակվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության աջակցությամբ:

Բովանդակություն

Անտառի մեղավոր անցյալը	7
Վուպուզել	19
Թե ինչպես սնանկացավ հացթուխը	49
Սովետական տոհմաձառ	59
Արծաթե արև	65
Խեցին	71
Սառցե աղջիկը	77
Գերիների հարցը	83
Մեկ օր առաջ	89
Այդ ուրախ օրը	95
Կարմիր գիծ	99
Խուլուհամր	109
Հորս սիրուհին	115
Մեր կոշիկի ձախ թայրը	119
«Սարսափ» տունը	123
Ցլամարտ	129
Ծուղրուղու	133
Ամանորի բաղադրությունը	137

Անտառի մեղավոր անցյալը

Ո՛չ մարդասպանություն էր, ո՛չ բան. ծառ էր, կտրել էին, ու ոստիկանները կատակելով, ծիծաղելով եկան: Կարևորը՝ բունը մնացել էր, արմատները կային, մի օր անձրև կաներ, մի օր՝ արև, ջահել ճյուղեր կաճեին, կանցներ-կգնար...

Բայց օրենքը պահանջում էր, ու ոստիկանները եկան՝ վկա ու հանցագործ փնտրելու: Անտառի փեշին ապրողներին էին հարցաքննում, բայց ո՛վ դրանց հետ գլուխ ունի. միամիտ մի բան ես ասում, կրակն ես ընկնում: Էնքան են տանում-բերում, հոգիդ հանում են: Ասեցի. «Ձե՞ռ եք առնում... ես էնքան եմ հոգնում, որ քնեցի, վերջ, վրայովս տանկ անցնի, չեմ զգա»: Բայց լավ էլ լսել էի. ծառը էնպիսի դրմփոցով տապալվեց, որ լճի ձայնը խլացավ, քնահարամ թռչունները ահաբեկված, ծղրտալով աջ ու ձախ թայրտացին: Համ էլ, ասեցի, նամուսով կնիկը ի՛նչ գործ ունի գիշերով դրսում, է՛ն էլ անտառի փեշին: Սիմոնն էլ ասաց. «Կ՛աճն անցեք... ո՛չ տեսել ենք, ո՛չ լսել»: Հետո, որ տուն էինք գնում, Սիմոնն ասեց. «Մեզ լավ պահեցինք, ճիշտը դա էր... ո՛վ ա արևոտ կացինը Աննիկի ձեռքը տեսել... էդ շան աղջիկը հոգին պիտի ազատե՛ր էդ տանջանքից, թե՛ չէ...»:

Իսկ էդ օրը Սիմոնը թքել՝ թո՛ւ ասել էր: Սիմոնի պես բարի, ուրախ մարդը որ զայրանա ու թքի, ո՛ր ես: Բայց չէր կարողացել զզվանքը զսպել. թքել, թո՛ւ էր ասել, ուրեմն Հայկը միշտ էր: Բայց հենց սկզբից, երբ հավարը գցեցին, օգնելու էր գնացել, ուղղակի ուշացել, վերջում էր հասել: Ու թո՛ւ էր ասել: Չնայած էդ հարաբերություններում ինքն էլ մի բան չէր. 40 կնիկ էր փոխել: Բայց ազնիվ էր. հենց մեկին սիրահարվում էր, մյուսին հրաժեշտ էր տալիս, չէր խաբում, ստելով չէր ստորացնում: Լավ էլ ուշադիր էր: Մեկ էլ տեսար, գալիս, պարտքով փող էր ուզում. «Չորրորդ կնկաս աղջիկը հիվանդ ա, գնամ տեսնեմ՝ հո լուրջ բան չի», կամ «Յոթերորդ կնկաս տղի գործերը ուստիկանությունում են: Գնամ հասնեմ երեխու վրա գործ չսարքեն»:

Ու որ վերջին մասը տեսել էր, ասում էր՝ դռան մոտ մի գյուղի չափ մարդ կար հավաքված, ու դրանց մոտ ուստիկանը գոռաց Հայկի վրա, ասեց. «Մատով կպել ես, կկոխես ծակը, սաղ կյանքդ կփտես»: Ու հենց ուստիկանը ոտքը քաշել էր, կնիկը եկել էր, թե՛ Հայկ ջան, կոֆե կխմե՛ս: «Թո՛ւ, – ասում էր Սիմոնը:

— Իզո՛ւր են ասել՝ նմանը նմանին ա գտնում. սենց բաներ են տեսել, նոր են ասել, հո չե՛ն հորինել»: Իսկ գիշերախառը, հենց հավարը գցեցին, Սիմոնը կոշիկ էլ չհագավ, չստերով վազեց օգնելու: Դուռը որ բացել, տեսել էր դրանց յոթ–ութ տարեկան փոքր աղջիկը լացելով գոռացել, օգնություն էր կանչել, աշխարհն աչքին մթնել էր: Լուսաբացից մի ժամ առաջ էր եղել: Կացինը վերցրել էր ու վազել, բայց ուշ էր հասել: Մի կացնով էլ արդեն Հայկն էր անտառի փեշին կանգնած եղել ու գոռացել էր. «Ով մոտեցավ, վիզը կթոցնեն»:

Անտառը պիտի շրջանցվեր, ուրիշ կողմից պիտի մտնվեր: Բայց մյուս կողմից սարերն էին, մնում էր՝ Քարվաճառի կողմից գար, մտներ ան-

տառ: Ժամից ավելի էր տևել: Էդ ընթացքում ոստիկաններն արդեն հասած էին եղել: Բայց ոստիկաններից առաջ Քարվաճառ գնացող զինվորականներն էին կնկա լացի ձենը լսել: Երբ զինվորական հագուստով, զինված, առողջ, վայրի տղամարդիկ իջել էին, Հայկը զինաթափ էր եղել: Հենց էդպես էլ՝ Հայկի այքի առաջ, կնկան դրել էին մեքենան, տարել հանձնել ոստիկանություն:

Ասում էին՝ իբր հենց զինվորականի պատճառով էլ ամեն ինչ սկսվել էր: Իբր ցերեկով սրանք կանգնել, խմելու ջուր էին ուզել, Աննիկը թան էր տվել: Էստեղից էլ կոփվը սկսվել էր, թե էդ ի՞նչ հոգատարություն ա: Խանդել էր Հայկը: Բայց սուտ ա, Հայկը կոված տղա էր, զինվորականի համար խոսողը չէր, թեկուզ եթե կնիկը գառ տար դրանց: Ասում են (ես դրան ավելի եմ հավատում)՝ գիշերը Հայկը քսմսվել է կնկան, քսմսվել, սա էլ թե՛ հոգնած եմ... Գուցե երկուսը իրար հետ՝ համ քսմսվել է, համ էլ ջահել, վայրի զինվորականի կրակոտ աչքերն ու պինդ ջլերն է հիշել, իսկ ինքը՝ արդեն հիսունն անց: Մի տարի էլ էր նման մի քան եղել: Էն ժամանակ էլ Սիմոնն էլի Հայկին էր մեղադրում, ասում էր. «Ա՛յ մարդ, որ դու խանդոտ ես, ինչի՞ ես տունդ ճամփի բերնին սարքել, որ ում ինչ պետք լինի, դուռդ ծեծի: Մեկի մեքենան ա փչանում, մյուսը օտարական ա՛րարեկամի տան տեղն ա հարցնում, մեկելը ժամանակ չունի՝ առաջանա, լուրը քո կնկա մոտ ա թողնում, որ տեղ հասցնի... քա չօգնի՛: Էդ էր՝ էդ, տունդ սարի գագաթին շարեիր...»:

Էդ տարի, որ Սիմոնն էդպես էր ասում, մի օտարական կանգնել, իր հորաքրոջ տեգոր տան տեղն էր հարցրել, հետն էլ գլխացավի դեղ էր ուզել: Համենայնդեպս, էդպես էին պատմում: Աննիկը հենց գնացել էր դեղը բերելու, Հայկը դրա

տակ դավադրություն էր տեսել. դուրս էր եկել, էս մարդուն քֆուր-քյաֆարով գցել էր քացու տակ: Կնիկը վազելով եկել, հասկացել էր՝ ինչ ա կատարվում, ու որպեսզի ամուսնուն համոզի, որ իր մտածածը չի, գոռացել էր. «Հայկ ջան, ճոնի՛կ՝ տուր, ճոնի՛կ»: Իբր՝ ես քոնն եմ, իմ սիրտը քո համար ա ցավում, ես քո հաղթանակն եմ ուզում: Սա օտարականին թողել, շուտ էր եկել, կնկան խփել, թե՛ ես քու սենցն ու նենցը. «Հնչի՛ իմ անճոնիկ գործը սարքեցիր ճոնիկով...»:

Հիմա էլ, հնարավոր ա, սրտի նեղությունից արած լինի: Տնաշեն, ասա, 24 տարվա մարդուկնիկ եք, ուզում ես առաջին գիշերվա կարոտո՞վ քեզ գրկի: Հենց էդպես՝ գիշերանցով էլ քաշել հանել էր տեղերի միջից, տարել կապել անտառի ծառերից: Բոլորն ասում էին՝ գելերը կերած կլինեն: Բայց լավ է՛ ամառ էր, աշուն կամ ձմեռ լիներ, ցուրտը գազաններից շուտ կուտեր դրան, էդ չորս երեխեն կմնար անմեր: Հայկն էլ, ով գիտի, կնկան վախեցնելու կամ գուցե հենց գելերից պաշտպանելու համար էլ կացինն առած անտառի տակ պահակ էր կանգնել: Դրանց ո՞վ ա հասկանում: Սիմոնն ասում էր՝ շատ ամոթ եղավ: Եթե տարել կապել ես, ախպե՛ր, կացինն էլ ձեռքիդ, գործը մինչև վե՛րջ հասցրու: Սպանի՛, ախպե՛ր: Թե չէ՛ ո՛մ ես ձեռ առնում, կնկադ կապել ծառերից, գյուղին քնահարամ արել, ու ի՛նչ, պահա՛կ ես կանգնել: Դրա համա՛ր ես երեխեքիդ ընկնավոր դարձրել, գյուղը քնահարամ արել:

Խեղճ երեխեքը ամոթից լացում էին: Գրո՞ղը տանի էդ տեսակ ծնողին: Դրանք որ ծերանան, ոտուձեռից ընկնեն, ու էդ երեխեքը դրանց դնեն տաշտի մեջ, լողացնեն կամ ճաշ

* Ճոնիկ - ուռք գցել (բրբ.) (Մանրագրությունը՝ newmag-ի):

կերցնեն, ինչ սրտով են էդ գուրգուրանքն ընդունելու: Էս օրը չեն հիշելու, էս օրվա լացը, էս քնահարամ մարդկանց, հետաքրքրասեր հայացքները, Հայկի գոռոցն ու կացին ճոճելը, պարանը, ծառը, էդպես էլ չերևացող գելերին... Էս գիշերը չեն հիշելու: Ումից ես պաշտպանում, Հայկ: Հույսդ գելերի վրա՝ էր: Պայման էիր կապել գելերի հետ: Գելն էր, ու կուշտ էր գալիս, գելն էր, ու անտառ չէր մտնում, սարերով էր անցնում, գելն էր, առհասարակ գոյություն չուներ, քո հարցերը ո՛վ պիտի լուծեր, Հայկ տղա: Բայց Սիմոնը վերջում էր հասել: Ասում էր. «Էդքան մարդ դռանը հավաքված, ոստիկանները մեքենայից իջեցրին Աննիկին, գիշերանոցը սաղ գյուղը տեսավ»: Աննիկն էլ խեղճացած, ուրիշ օրեր ածան հավից շատ էր կշկշում, իսկ էդ ժամանակ գլուխը կախ անցել էր մարդկանց միջով: Ոստիկանն էլ առաջն ընկած գնացել էր ու Հայկի վրա մատ թափ տվել. «Խաթրին կպել ես, ինձ հետ գործ կունենաս»:

«Թե ասա, դու որ քեզ մեղավոր չես զգում, Աննի՛կ աղջիկ,– ասում էր Սիմոնը,– ինչի՞ ես գլուխդ կախում, ինչի՞ ես հայացքդ փախցնում մարդկանցից: Էդ ո՛վ գիշերանոց չի հազնում, որ դու էլ իբր դրանից ամաչեցիր, վայվավիլե՞՝ գիշերանոցդ տեսան, էլ ո՛նց կլիներ: Գնա, քեզ քարափից գցի... Հայկին որ հավատանք, տրուսիկդ տեսնող էլ ա եղել: Բայց ամոթ, ամոթ Հայկին: Մարդ իր 24 տարվա կնկան լրբի անուն կկպցնի՞, հետո էլ կացինն առած՝ դեմը կկանգնի՞: «Էդքանից հետո,– ասում էր Սիմոնը,– կամ պիտի սպանես, կամ բաժանվես, ոչ թե ոչխարի պես գլուխդ կախած կանգնես, ոստիկանը վրեղ մատ թափ տա»:

* վայվավիլե — վշտի, արհեստանքի, զարմանքի արտահայտություն (բրբ):

Ու էդպես Աննիկը՝ խարույկ բարձրացվող վիուկի պես մազերը զգզզված, քայլել ա ոստիկանի հետևից մինչև տան դուռը: Ոստիկանը ներս չի մտել, բայց ինչ որ պետք ա, Հայկին հասկացրել ա: Սիմոնն ասում էր՝ շատ ամոթ էր, հատկապես էդ վերջին պահը, թո՛ւ: Երբ արդեն ժողովուրդը ցրվում էր, մի քանի հոգի էին մնացել, Աննիկը նույն գիշերանոցով դուրս ա եկել ու հարցրել, իբր բան էլ չի պատահել, հարցրել ա՝ Հայկ ջան, կոֆե կուզե՛ս: «Բա քեզ էդպես ստորացնեն, խայտառակեն,– ասում էր Սիմոնը,– ու դու դրան ասես ջա՛ն, ասես՝ կոֆե՛: Հասունացած էլ երեխեք ունեք ախր: Թո՛ւ,– ասում էր Սիմոնը,– ուրեմն Հայկը ճիշտ էր. դրան էդպես էլ պետք էր, թո՛ւ...»:

Սիմոնը՝ Սիմոն, բայց ես Հայկի կողմից եմ: Թե ասա, Աննիկ աղջիկ, ո՛ր ես օգնություն կանչել, սաղ գյուղով խեղճին խայտառակ արել: Ծերացող տղամարդ ա, արել՝ արել ա: Ի՛նչ գիտես՝ մարմինը ինչ վիճակում ա, կամ հոգում ինչեր են կատարվում... Հայկին նո՛ր ենք ճանաչելու, քեզ վատ ամուսի՛ն ա եղել: Հարևան մարդ ենք, ասելով չի: Ախր ես եմ տեսել, իմ աչքով եմ տեսել, կթու կովի պես կթում էր: Մի օր հենց բակում հանեց 20 հազարանոցը. «Հազար դրամը՝ ծնունդիդ, հազարը՝ մարտի ութին, հազարը՝ ապրիլի յոթին, հազարը՝ Ձմեռ պապի կողմից...»: Ու էսպես երկու տարվա տոներն ու նվերները բիրիքով փակեց: Ճիշտ ա, հազար դրամով հիմա լավագույն դեպքում երկու կիլո կարտոլ կառնես, բայց կարևորը կամեցողությունն ա: Իբր Աննիկն իրենից ի՛նչ ա ներկայացնում: Հայկի տունն էլ էդտեղ շինվի, գրպանից հանածը 20 հազարանոց ա: Եկավ հորքուրին տեսնելու, 20 հազար դրամի միրգ ու ուտելիք էր բերել: Ծախսող, լավ տղա ա, ոչ թե կնկա նման՝ ժլատ մեռնում ա. տարուց ավել՝ կնկա փորը ցավում ա,

բժշկի էլ չի գնում, գերադասում ա ցավի հետ ապրի, քան թե մի քանի կոպեկ փող ծախսի: Դա պիտի Սուրոյի հարսը չըլներ, աղջիկը ըլներ: Նա էլ էր կոպեկի համար հոգի տալիս: Տղերքը փող էին ուղարկում, որ ապրի, իրեն գրկելով՝ հարկը հարկի վրա էր բարդում՝ երկո՛ւ, երե՛ք, չո՛րս... Գիտեր՝ պիտի գան, ապրեն: Մեռավ՝ հեջ կնիկը կողքին չէր եղել: Չնայած Սիմոնն էլ դրան գովում ա, ասում ա՝ մի տարի իրեն գրկեց, Հայկին մեքենա առավ: Մեքենա էլ մեքենա լինի... սովետական, մետաղի ջարդոն: Բայց դե, գոնե ոտները գետնից կտրվում են... Սիմոնին ասում են. «Էդ էլ չանե՞ր, ջահելությունից մինչև էսօր հետևից հազար բամբասանք ա կախված: Բայց Հայկը տանում ա: Հիշո՞ւմ ես, – ասում են Սիմոնին, չնայած ես էլ չեմ հիշում, կեսուրիցս են լսել: Էդ ժամանակ ես սրանց հարևանը չէի, – Հայկի հերն ու մերը ուղիղ մի շարաթ քնեցին Հասոյի տանը (էն, որ հիմա ավերակ ա), որ դրա երեսը չտեսնեն»:

Ամեն օր նորածնին գրկած գալիս, նստում էր Հայկենց դարպասի տակ ու երեխուն լացացնում: Մարդկանց խղճի վրա էր ուզում ազդել, որ ներս առնեն: Լավ ա, Հասոյի մերը մեռել էր էդ ժամանակ, Հասոն բանալին տվել էր, որ իր լիմոնի ծառը ջրեն: Հայկի ծնողները, օղորմի իրենց, կարգին մարդիկ էին, լիմոնի ծառի հետևից նայում էին ու զարմանում, թե էդ երեխեն ինչի պիտի էդքան լաց լիներ: Ով գիտի, չէր կերակրում: Չնայած ես դրանից հավատում եմ՝ կճմթած էլ կլինի, միայն թե իր գործը առաջ տանի: Խեղճերը գիշերով թաքուն մտնում էին իրենց տուն, հաց էին ուտում, շոր փոխում, լույսը դեռ չբացված՝ վազում, Հասոյի լիմոնի ծառի հետևը թաքնվում: Հարևանները հերթով դուրս էին գալիս, համոզում էին, ասում. «Ա՛յ աղջի, գնա՛ տուն, իրենք էստեղ չեն, տանը մարդ չկա»: Մի

ամբողջական գիրքն այստեղ է՝